ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/273-2021 գրությամբ «Промышленные Технологии» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 11.01.2021թ. թիվ Ե/40/7-21 գրության հիման վրա 14.01.2021թ. թիվ 26/26-1/273-2021 գրությամբ նախաձեռնել է «Промышленные Технологии» ՕՕՕ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Промышленные Технологии» ՕՕՕ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Промышленные Технологии» ՕՕՕ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից առաջարկվող ջրածնային

գեներատորը՝ ՓՀ-10.25 ապրանքային նշանով, ալկալիական տեխնոլոգիայի հիմքով է, որը գերազանցում է ոչ ալկալիական հիմքով տեխնոլոգիային:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/09 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 11:20-ին և 05.02.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ չի կարող ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին, քանի որ համավարակով պայմանավորված սահմանափակումների հետևանքով Ընկերությունը չի կարող ժամանել Երևան:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.01.2021թ. թիվ Ե/40/7-21 գրությամբ հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից սեփական կարիքների համար «Ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատորի մատակարարում ՀԱԷԿ N 2 էներգաբլոկի համար» ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով գնման ընթացակարգ, որին, ի թիվս մյուս մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Промышленные Технологии» ООО-ն»: Մասնակցության հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից առաջարկվող ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատորը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված մասնակցության հայտի հավելված 1.1-ի նշված տեխնիկական բնութագրում առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի անբաժանելի մաս կազմող տեխնիկական պահանջներին: Գնահատող հանձնաժողովի 24.12.2020թ. թիվ 3 որոշմամբ նիստը կասեցվել է և Ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված հավելված 1.1-ը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի (պարամետրերին) համապատասխան խմբագրված՝ հրավերի անբաժանելի մասը կազմող տեխնիկական պահանջները, որը կբավարարի հրավերի պահանջներին: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից կատարվել են շտկումներ, սակայն հանձնաժողովը, դիտարկելով Ընկերության ներկայացված շտկված հավելված 1.1-ը,

արձանագրել է, որ Ընկերությունն առաջարկում է ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատոր, իսկ հրավերով պահանջվում է ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատոր:

Գնահատող հանձնաժողովի 28.12.2020թ. թիվ 4 որոշմամբ Ընկերության մասնակցության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումը հիմնավորող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/09 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 11:20-ին և 05.02.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Промышленные Технологии» ООО-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունն առաջարկում է ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատոր, իսկ հրավերով պահանջվում է ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատոր:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/273-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 11.01.2021թ. թիվ Ե/40/7-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/09 ընթացակարգի շրջանակներում «Промышленные Технологии» ՕՕՕ-ի ներկայացրած դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Промышленные Технологии» ООО-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Հանձնաժողովը, ուսումնասիրելով համացանցում ներկայացված ապրանքային նշանով (ФС-10.25) և ֆիրմային անվանմամբ՝ (ИФТИ) ջրածնային գեներատորի տեխնիկական բնութագրերը, արձանագրել է, որ նշված մոդելի և ֆիրմային անվանմամբ գեներատորը վերաբերվում է ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատորին: Հրավերով սահմանված է, որ ջրածնային գեներատորը պետք է լինի ոչ ալկալիական տեխնոլոգիայի հիմքով: Հետևաբար առաջարկվող գեներատորը չի կարող համարվել համարժեք և բավարար հրավերի պահանջներին: Անհրաժեշտ է իրականացնել ոչ ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատորի մատակարարում ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի համար, որը բավարարում է հրավերի պահանջներին:

Ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված մասնակցության հայտի հավելված 1.1-ի նշված տեխնիկական բնութագրում առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի անբաժանելի մաս կազմող տեխնիկական պահանջներին, օրինակ՝ ջրածնի մաքրությունը, գաբարիտային չափերը, ջերմատվության ծավալը և այլն: Բացի այդ ներկայացված մասնակցի տեխնիկական բնութագրում կրկնվում է նույն պարամետրը տարբեր արժեքներով: Օրինակ՝ տեսակարար էներգոսպառում -5,4 (հավելված 1.1-ի 1-ին էջ) և տեսակարար էներգոսպառում - 6.2 (հավելված 1.1-ի 5-րդ էջ,4-րդ կետ , 4.1 ենթակետ): Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը և համապատասխանեցնել հրավերի պահանջներին»:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Ընկերությանը՝ կցելով 24.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, և առաջարկել ներկայացնելու շտկված հավելված 1.1-ը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերին (պարամետրերին) համապատասխան խմբագրված՝ հրավերի անբաժանելի մաս կազմող տեխնիկական պահանջները, որը կբավարարի հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունն առաջարկում է ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատոր, իսկ հրավերով պահանջվում է ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատոր:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «***Ոչ ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատորի մատակարարումը ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի համար***»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Промышленные Технологии» ООО-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ***Ընկերության կողմից առաջարկվող ջրածնային գեներատորը՝ ՓՀ-10.25 ապրանքային նշանով***, ***ալկալիական տեխնոլոգիայի հիմքով է***, որը գերազանցում է ոչ ալկալիական հիմքով տեխնոլոգիային:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով***

<u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Ընկերությունն առաջարկում է ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատոր, իսկ հրավերով պահանջվում է ոչ ալկալիական հիմքով ջրածնի գեներատոր, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Промышленные Технологии» ՕՕՕ-ն «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով

ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2021թ. թիվ 26/26-1/273-2021 գրությամբ «Промышленные Технологии» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Промышленные Технологии» ՕՕՕ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**